ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սևան համայնք, Սևան քաղաք *09.06.2023թ.*

Սույն թվականի հունիսի 9-ին, ժամը 12.00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի, Սևան համայնքի համայնքապետարանում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ 12-րդ, 13-րդ հոդվածների, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշմամբ սահմանված կարգով, տեղի ունեցավ «Քրիստալ Լեյք Հոլդինգս» ՍՊԸ կողմից ձեռնարկվող հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների առաջին նիստը:

Ներկա էին համայնքապետարանի ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ, ձեռնարկողի, խորհրդատվական կազմակերպության ներկայացուցիչներ, (մասնակիցների ցանկը ստորագրություններով և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքով հանդես եկավ Սևանի համայնքապետարանի ներկայացուցիչ Հայկ Ղուկասյանը, ով ներկայացրեց, որ պատշաճ կերպով իրազեկվել է համայնքին այն մասին, որ «Քրիստալ Լեյք Հոլդինգս» ՍՊԸ կողմից նախատեսվում է հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի կառուցման աշխատանքներ, որի համար այսօր հավաքվել ենք իրականացնելու շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների առաջին նիստը և խոսքը փոխանցեց ձեռնարկողի ներկայացուցիչ Արթուր Մկրտչյանին:

Ա.Մկրտչյանը մանրամասն ներկայացրեց նախագծային առաջադրանքը, նրանում ներառված նարտարապետական և բնապահպանական լուծումները:

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի գլխավոր տեսուչ Արայիկ Խաչատրյանն առաջարկեց կենցաղային թափոնները անձնագրավորել:

Հ. Ղուկասյանը հարցրեց, թե արդյո՞ք առաջին փուլում երկու մասնաշենքերը շահագործման հանձնվելուց հետո է մնացած ծրագիրը իրականացվելու:

Ա.Մկրտչյանն ասաց, որ այո, ներդրումային ծրագրով է այդպես նախատեսված:

Հ. Ղուկասյանն ասաց, որ բացի ազգային պարկի տարածքի հողերից կա՞ն նաև սեփական վարչական տարածքի հողեր:

Ա.Մկրտչյանը պատասխանեց, ազգային պարկի մի հատվածն է Նորաշեն, իսկ սեփականը հիմնականում Չկալովկա է:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակից Դավիթ Զանգեզուրյանը հետաքրքրվեց աշխատանքների սկսվելու վերաբերյալ:

Ա.Մկրտչյանն ասաց, որ հնարավոր է հաջորդ տարվա գարնանը:

Հ. Ղուկասյանը հարցրեց առաջին փուլի շինարարությունը քանի ամիս է նախատեսվում:

Ա.Մկրտչյանը պատասխանեց, որ տևելու է 37 ամիս:

Հ. Ղուկասյանն ասաց, որ համայնքը իր դրական համաձայնությունը տալիս է և հարցրեց, թե քանի աշխատող է աշխատելու առաջին փուլի շահագործման հանձնելուց հետո:

Ա.Մկրտչյանն ասաց մոտ 300 հոգի:

Քանի որ դիտողություններ և առաջարկություններ չեղան հանրային լսումների արդյունքում, բոլորը միանշանակ կողմ էին նախատեսվող գործունեությանը, մասնակիցները որոշեցին՝ հավանություն տալ հյուրանոցային համալիրի և բազմաֆունկցիոնալ կոնֆերանս կենտրոնի կառուցման աշխատանքների նախագծին և նրանում ներառված բնապահպանական միջոցառումներին և փակեցին նիստը: